

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ ՊՐՆ. Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ Ջուհն Մարտիրոսյան

ՀԱՍՑԵ Բ. Գյումրի մուշ 2 թռ 5 11 փող 2.3 թռ 48

ՀԵՌ. 098 34 58 40, 094 54 0469

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ levonmatsyan222@gmail.com

ԴԻՄՈՒՄ

Քննարկելով MERCEDES BENZ E 430 ~~3~~ 34ZR752
մակերիտ մեխանիկայի 5 2018թ.թ.մ.վ.մ. և սպասարկող
11-ին կնքում և 5 մեխանիկայի շարժարկի վրա
խանութի մեխանիկայի շարժարկի վրա սպասարկող 5
կնքում:

18 07 2023 թ.
Օր ամիս տարի



Դիմող՝ [Signature]
(ստորագրություն)

Ջուհն Մարտիրոսյան
(անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՎԿԱՅԱԿԱՆ N 01BA400887

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

ԼԵՎՈՆ ԳԵՎՈՐԳԻ ՄԱԹՈՍՅԱՆ ,

(սեփականատիրոջ (համասեփականատերերի) ազգանունը, անունը, հայրանունը)

AK0403820 26-11-2009 016,

(անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրված)

(կազմակերպության դեպքում՝ լրիվ անվանումը և պետական ռեգիստրի վկայականի համարը)

ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ՄՈՒՅ 2 ԹՂՄ. Շ 50 ԲԿ. 48

(հաշվառման (բնակության, կազմակերպության դեպքում՝ գտնվելու) վայրը)

մականիշը, տիպարը **MERCEDES-BENZ E 430** , թողարկման տարեթիվը **1998 թ.**,

տեսակը **ԹԵԹԵՎ ՄԱՐԴԱՏԱՐ** , թափքի տեսակը **ՍԵԴԱՆ** , նույնացման համարը(VIN) **WDB2100701A655331**,

թափքը համարը , հենասարքը (ամրաշրջանակի) համարը ,

շարժիչի համարը **11394030008414**

շարժիչի հզորությունը **279 ձ.ուժ**

Սեփականության իրավունքը ծագել է **17-09-2014**-ին

Առուվաճառքի պայմանագիր-ի հիման վրա:

Այլ նշումներ

Հայաստանի Հանրապետության կառավարության
աղընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության
«Ճանապարհային ոստիկանություն» ծառայության


ԵՐԵՎԱՆԻ ՀԲԲ (264)

(ստորաբաժանման անվանումը)

հաշվառման-քննական ստորաբաժանման ավագ տեսուչ-օպերատոր

(անունը, ազգանունը)

(ստոր



17-09-2014 թ.



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
 Փ Ո Բ Չ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Կ Ե Ն Տ Բ Ո Ն
 Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ո Չ Ա Ռ Ե Վ Տ Բ Ա Յ Ի Ն Կ Ա Չ Մ Ա Կ Ե Բ Պ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

0023, ք. Երևան, Արշակունյաց պող. 23, հեռ. (010) 44-11-36, ֆաքս (010) 58-15-74, էլ. կայք՝ justexpert.am

№ 23421904

«21» հուլիսի 2020թ.

[Handwritten signature]
[Handwritten signature]
 230720

ՀՀ ՔԿ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ
 ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
 ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Ս. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մկրտչյան

Համաձայն 25.07.2019թ.-ի №56/11-222819 գրության ուղարկվում է փորձագետի 2020թ.-ի հուլիսի 21-ի թիվ 23421904 եզրակացությունն ըստ թիվ 68107818 քրեական գործի:

Առդիր՝ 1. Եզրակացությունը՝ 7 թերթից, լուսանկարչական հավելված՝ «28» լուսանկարներով:

2. Վերադարձվող նյութեր. քրեական գործը՝ «334» թերթից, մեկ օպերատիվ մատյան՝ «100» թերթից:

3. Թիվ «1068» հանձնման - ընդունման արձանագրությունը մեկ թերթից:

Հարգանքով՝
 տնօրենի պաշտոնակատար

[Handwritten signature]

Վ. Պետրոսյան

Կատարող՝ նյութագիտական, հրդեհատեխնիկական և էլեկտրատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետի ժ/պ՝ Վ. Գրիգորյան, հեռ. (010)44-11-36+28

13

56/11/2-3764-20
 07 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0023, ք. Երևան, Արշակունյաց պ., 23

հեռ.՝ 010-44-11-36 www.justexpert.am

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քր.դատ.օր-ի 248 հոդվածին համաձայն մեզ բացատրված են փորձագետի իրավունքներն ու պարտականությունները, որոնք նախատեսված են նույն օրենսգրքի 85 հոդվածով:

Ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, ինչպես նաև նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված ենք:

Փորձագետներ՝

Գ. Հարությունյան

Մ. Հարությունյան



ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թիվ՝ 23421904

«21» հուլիսի 2020թ.

Ըստ գործի՝ թիվ 68107818 քրեական:

Փորձաքննության տեսակը՝ էլեկտրատեխնիկական և հրդեհատեխնիկական:

Փորձաքննության հիմքը՝ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ՝ Է. Ալեքսանյանի 2019թ. հուլիսի 24-ի որոշումը, դատաէլեկտրատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին, որը ստացվել է 2019թ. հուլիսի 30-ին:

Փորձաքննությունը սկսվել է՝ 2019թ. հուլիսի 30-ին:

Փորձաքննության կատարման ժամկետը կասեցվել է՝ 2019թ. հուլիսի 30-ից մինչև 2019թ. օգոստոսի 23-ը, ինչը կապված է եղել դեպքի վայրի տրամադրման հետ և 2019թ. սեպտեմբերի 25-ից մինչև 2020թ. մայիսի 12-ը, ինչը կապված է եղել միջնորդությամբ պահանջված փաստաթղթերի տրամադրման հետ:

Տեղեկություններ փորձագետների մասին.

Գ. Հարությունյան՝ Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոնի նյութագիտական, հրդեհատեխնիկական և էլեկտրատեխնիկական փորձաքննությունների բաժնի փորձագետ, բարձրագույն կրթությամբ ինժեներ-էլեկտրիկ, էլեկտրատեխնիկական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ, 43 մասնագիտական և 15 տարվա փորձագիտական ստաժով:

Մ. Հարությունյան՝ Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոնի նյութագիտական, հրդեհատեխնիկական և էլեկտրատեխնիկական փորձաքննությունների բաժնի փորձագետ, բարձրագույն քիմիական կրթությամբ, հրդեհատեխ-

նիկական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ, փորձագիտական աշխատանքի ստաժը՝ 6,5 տարի:

Փորձագետներին առաջադրվել են պարզաբանման ենթակա հետևյալ հարցերը՝

«1. Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոց 40/6 հասցեում գտնվող շինության տանիքի և դրանից մոտ 3 մետր հեռավորությամբ անցնող Բայանդուր ֆիդերի 3,3կՎ բարձր լարման մալուխի վրա կարճ միացման հետքեր կան, թե ոչ, եթե այո, ապա որոշել դրանց տեղակայումը, քանակը, տևողությունը և առաջացման մեխանիզմը:

2. Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոց 40/6 հասցեում գտնվող շինության տանիքի և դրան հարակից անցնող Բայանդուր ֆիդերի մալուխի կարճ միացման դեպքում ինչկան է կազմել հզորությունը և դրա առկայության ժամանակ կարող էր անջատվեր Բայանդուր ֆիդերի արագ անջատման համակարգը, թե ոչ:

3. Բայանդուր ֆիդերի վրա տեղադրված եղել է արագ անջատման համակարգ, թե ոչ, եթե այո, ապա ինչ հզորությամբ, այն կրկնակի միացման համակարգով է եղել, թե ոչ և վերոնշյալ դեպքի ժամանակ վերջինիս գործել է ու միացվել է արդյոք, եթե այո, ապա ինչկան ժամանակ անց և ինչ տևողությամբ:

4. Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոց 40/6 հասցեում գտնվող շինության տանիքը և դրանից մոտ 3 մետր հեռավորությամբ անցնող Բայանդուր ֆիդերի մալուխն իրենց տեղակայմամբ համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նորմերին, թե ոչ, եթե ոչ, ապա ինչ նորմ է խախտվել, ում կողմից և դա կարող էր պատճառական կապ ունենար հրդեհի առաջացման հետ»:

Առաջադրված հարցերին պատասխանելու համար 2019թ.-ի օգոստոսի 23-ին փորձաքննությանը տրամադրվել է հրդեհի վայրը: 2019թ. սեպտեմբերի 25-ին նախաձեռնողին ուղարկվել է միջնորդություն, ըստ որի պահանջվել են «թիվ 68107818 քրեական գործը և Լենինականի էլեկտրամատակարարման ՅԿ-7-ի տեղամասի օպերատիվ մատյանը /բնօրինակ/, որտեղ նշված են 2018թ. սեպտեմբերի 11-ի գրառումները»: Ի պատասխան միջնորդության՝ 2020թ. մայիսի 12-ին փորձաքննությանը տրամադրվել են պահանջված փաստաթղթերը. թիվ 68107818 քրեական գործը՝ «334» թերթից և մատյանը՝ «100» թերթից: Փորձաքննությանը ներկայացված գործի նյութերին ծանոթանալուց հետո, դրանց բոլոր էջերին դրվեց «Փորձագետ-22» շտամպի դրոշմը:

Օգտագործված գրականություն

1. *А.И. Федотов, А.П. Ливчииков, Пожарно-техническая экспертиза, М., 1986 г.*
2. «Սպառողների էլեկտրապրոտեկտայանքների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը, ՀՀ Կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի №1939-Ն որոշում:

3. «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը, ՀՀ Կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի №1933-Ն որոշում:

4. «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններ», ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006թ. դեկտեմբերի 27-ի №358 ն որոշում:

5. «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգը, ՀՀ Կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի №1943-Ն որոշում:

6. «Էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը», ՀՀ Կառավարության 2009թ© ապրիլի 02-ի №363-Ն որոշում:

7. Նախագծի էլեկտրատեխնիկական մասի փորձաքննություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ:

8. Տեսական էլեկտրատեխնիկայի հիմքերը:

9. Էլեկտրատեխնիկական տեղեկագրեր:

10. «Էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը», ՀՀ Կառավարության 2007թ. հուլիսի 12-ի №961-Ն որոշում:

11. «ИССЛЕДОВАНИЕ МЕДНЫХ И АЛЮМИНИЕВЫХ ПРОВОДНИКОВ В ЗОНАХ КОРОТКОГО ЗАМЫКАНИЯ И ТЕРМИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ. МЕТОДИЧЕСКИЕ РЕКОМЕНДАЦИИ ВНИИ МВД СССР, 1986г.:


12. Էլեկտրական բեռնվածքների էմպիրիական հաշվարկի մեթոդները:

Գործի հանգամանքները

(ըստ նախաձեռնողի ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության թիվ 68107818 քրեական գործով դատաէլեկտրատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին՝ 24.07.2019թ. կայացված որոշման)

«2018 թվականի սեպտեմբերի 11-ին՝ ժամը 18:04-ին, 911 ծառայություն ահազանգ է ստացվել քաղաքացի Ա.Էռնեսյանից այն մասին, որ հրդեհ է բռնկվել Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի 40/6 հասցեում գտնվող շինությունում:

Դեպքի առթիվ Շիրակի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունում նախապատրաստված նյութերով պարզվել է, որ 2018 թվականի սեպտեմբերի 11-ին Գյումրու Գարեգին Ա փողոցի 40/6 հասցեում գտնվող շինությունում տեղի ունեցած հրդեհի հետևանքով վնասվել և դեֆորմացվել են Էդուարդ Կոյայի Խաչատրյանին պատկանող «Փյունիկ-97» ՍՊԸ-ի շինության տանիքի մեքաղյա հիմնավարրերը, փլվել է առաստաղը՝ ՍՊԸ-ին պատճառելով առանձնապես խոշոր չափերի՝ 4.000.000 ՀՀ դրամի, նյութական վնաս: Այրվել, մոխրացել և վնասվել են 240 մ2 մակերեսով շինությունում եղած Վոլոդյա Եղիշի Մելքոնյանին պատկանող տարբեր մակնիշի ավտոմեքենաների օգտագործված պահեստամասերն ամբողջությամբ որի հետևանքով վերջինիս պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ 65.000.000 ՀՀ դրամի, նյութական վնաս: Այսինքն՝ հրդեհի հետևանքով ընդհանուր պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ 69.000.000 ՀՀ դրամի, վնաս:



21.09.2018 թվականին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 68107818 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում կատարվել են քննչական ու այլ դատավարական մի շարք գործողություններ, մասնավորապես. որոշումներ են կայացվել փուժող ճանաչելու մասին, որպես փուժող հարցաքննվել է Վոլոդյա Եղիշի Մելքոնյանը, իսկ որպես վկաներ՝ Էդուարդ Կոյայի Խաչատրյանը, Դավիթ Գարեգինի Մարտիրոսյանը, Լևոն Գևորգի Մաթևոսյանը, Արմեն Վոլոդյայի Մելքոնյանը, Էդվարդ Նելսիկի Սարոյանը, Կարապետ Ալեքսանդրի Տիրապետյանը, Վաչագան Ռաֆայելի Պետրոսյանը, Արմեն Իվանի Թորոյանը, Հովհաննես Կառլենի Ավդայանը: Զննվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի Գյումրիի քարշային ենթակայանի օպերատիվ մատյանը, որպես վկա հարցաքննվել են նշված ընկերության Գյումրի քարշային ենթակայանի հերթապահ Արամ Կարապետի Հարությունյանը և Գյումրու հպակային ցանցի պետ Արտակ Գառնիկի Զանինյանը:

Վոլոդյա Մելքոնյանն իր ցուցմունքով հայտնել է, որ 2015 թվականի մարտ ամսից, հանդիսանալով անհատ ձեռնարակատեր, զբաղվել է արտասահմանյան փարբեր մակնիշի ավտոմեքենաներ գնելով, դրանք ապամոտնաժելով, ապա օգտագործված պահեստամասերի վաճառքով, որոնք պահեստավորել է Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի 40/6 հասցեում գտնվող շինությունում: 2016 թվականի հոկտեմբեր ամսից դադարեցրել է գործենությունը՝ առողջական խնդիրներ ունենալու պատճառով: 2018 թվականի սեպտեմբերի 11-ին՝ երեկոյան, որդին Արմենը վերադարձել է փուն և ասել, որ պահեստավորված ամբողջ ավտոմասերն այրվել են, այրվել է նաև շինությունը: Իմացել է նաև, որ շինության հետնամասից մոտ 3 մետր հեռավորությամբ անցնող մալուխի վրա է ընկել շինության փանիքը, որից կարճ միացում է առաջացել և հրդեհ է սկսվել, որի հետևանքով ամբողջությամբ էլեկտրահարվել ու մոխրացել են դրանում եղած պահեստավորված գույքը: Հաջորդ օրը տեղում տեսել է, որ հրդեհն այնքան ուժեղ է եղել, որ ամբողջ ավտոպահեստամասերը մոխրացել են, նույնիսկ մեքաղյա դեֆալները հալվել են, հալվել են նաև կտուրի, փանիքի, ինչպես նաև շինության վրա եղած ամրանները: Կատարվածի հետևանքով իրեն պատճառվել է մոտավորապես 65.000.000 ՀՀ դրամ վնաս: Միաժամանակ նշել է, որ վերոնշված շինության հետնամասից անցնող բարձր լարման մալուխը վրանգավոր է եղել, քանի որ այն մոտ 3 մետր հեռավորությամբ է անցել, բացի այդ գեպնից ունեցել է մոտ 4,5 մետր բարձրություն, որը նորմերին չի համապատասխանում: Այսինքն՝ մալուխի մոնտաժման անհամապատասխանություն է եղել նորմերին, որն իր անձնական կարծիքն է: Որպես հրդեհի առաջացման մեխանիզմ նշել է, որ փողայից իմացել է, թե ինչպես շինության ամբողջ կտուրը, որը մեքաղական է եղել և միացված է եղել շենքի մեքաղյա կոնստրուկցիային, քանու հետևանքով այն ընկել է նշված բարձրավոլտ մալուխի վրա, արդյունքում կարճ միացում է առաջացել, հոսանքահարվել է ամբողջ շենքը, բարձր լարման փակ առաջացել է հրդեհ՝ շար բարձր ջերմաստիճանով:

Արմեն Մելքոնյանը նշել է, որ 2018 թվականի սեպտեմբերի 11-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում, գտնվել է վերոնշված շինությունում: Ժամը 18:00-ի սահմաններում,

ուժեղ քամի է սկսվել, որից հետո տեսել է, որ շինության փանիքը տեղից պոկվել ու քամու հաշվին վերև է բարձրացել, այնուհետև շինության ճակատային մասից բոցեր են նկատվել: Անցնելով շինության հետնամաս՝ տեսել է, որ փանիքը ընկել է շինության հետնամասից անցնող բարձր լարման մալուխի վրա ու անընդհատ բոցավառվել է զողման տեսքով: Ահազանգել է 911 ծառայություն ու կանչ է փոխել, ովքեր եկել են մոտ 10 րոպե անց, հանել անհրաժեշտ պարագաները, սակայն քանի որ ակնհայտ երևացել է, որ շինությունը գտնվում է լարման տակ՝ առկայծող բոցերի տեսքով, նրանք ոչ մի բան չեն արել: Սկսել են զանգել համապատասխան մարմիններ՝ մալուխը հոսանքազրկելու համար: Մոտ 20 րոպե անց զանգ են ստացել, որ հոսանքն անջատված է, որից անմիջապես հետո փորձել են հրդեհաշիջումը սկսել, սակայն զգացել են, որ լարում կա շինությունում և նորից զանգով տեղեկացրել են, որ հոսանքազրկված չէ: Դրանից մոտ մեկ ժամ ևս սպասել են, մինչև զանգ են ստացել, որ հոսանքն անջատված է, իսկ այդ ընթացքում այրվել է շինությունում պահեստավորված ամբողջ գույքը: Միաժամանակ նշել է, որ կարճ միացումը տևել է մոտ 1,5 ժամ, որը եղել է ժամը 18:00-ից 19:30-ի սահմաններում: Հրդեհն առաջացել է վերոնշված մեխանիզմով: Իր ստացած տեղեկություններով այդ կարճ միացման դեպքում, այսինքն՝ շինության փանիքի և դրա հետնամասից անցնող բարձր լարման մալուխի իրար հպումից անմիջապես հետո ավտոմատ հոսանքը պետք է անջատված լիներ, որը տվյալ դեպքում չի անջատվել և շարունակվել է:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի Գյումրիի քարշային ենթակայանի հերթապահ Արամ Հարությունյանը ցուցմունք է փոխել, որ 11.09.2018 թվականին հերթական անգամ եղել է շուրջօրյա աշխատանքի: Նշված օրը՝ ժամը 17:30-ի սահմաններում, իր աշխատասենյակի դեկավարման վահանակի միջոցով ազդանշան է ստացել ենթակայանի սպասարկման 5 հատ ֆիդերներից մեկի բեռնվածության վերաբերյալ, որը լինում է նաև գնացք անցնելու ժամանակ: Նման դեպքում պետք է ուշադրություն դարձնի անջատվելուց անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելուն: Ենթակայանի պաշտպանական համակարգն աշխատել է 1.400-ից 2.800 Ամպեր հոսանքի ուժով, այսինքն՝ ֆիդերը կանջատվի է այդ սահմանաչափն անցնելուց: Բայանդուրի ֆիդերի սահմանային չափը եղել է 2.800 Ա: Նշված ժամին Բայանդուր վազքուղու վրա գտնվել է մարդատար էլեկտրոգնացք: Վերոնշված բեռնվածությունը տևել է 5 րոպե, որից հետո այդ ֆիդերն անջատվել է: Դա տեսել է վահանակի վրա՝ ազդանշանային լույսի միջոցով, որն ազդարարել է վթարային անջատման մասին: Սահմանված կարգով զանգել է Երևանի էներգոկարգավարին և հայտնել, որ անջատվել է Բայանդուր ֆիդերը, որի մասին գրառում է կատարել օպերատիվ մատյանի մեջ՝ րոպեի ճշգրտությամբ, որը եղել է ժամը 18:00-ի սահմաններում: Հայտնել է, որ քարշային ենթակայանում անջատման դեպքում ավտոմատ միացում չկա, այն միացնելու համար պետք է հրահանգ ստանա էներգոկարգավարից: Մինչև ժամը 18:30-ի սահմանները ինքը որևէ տեղեկություն չի ունեցել Բայանդուր ֆիդերի մասին: Ժամը 18:30-ին Գյումրի քարշային ենթակայանն ամբողջությամբ հոսանքազրկվել է, որի մասին նորից հայտնել է էներգոկարգավարին և նշում կատարել օպերատիվ մատյանում: Դրանից հետո վերջինիցս ստացել է հրահանգ անջատել 3,3 ԿՎ Արևիկ


ֆիդերի ավտոմատ ու գծային անջարտիչները, որն կադարելուց հետո զեկուցել է այդ մասին, որի ընթացքում ստացել է հրահանգ անջարտել նաև 3,3 ԿՎ Բայանդուր ֆիդերի գծային անջարտիչը, իսկ ավտոմատն արդեն անջարտված է եղել: Հետո հրահանգ է ստացել անջարտել 10 ԿՎ Փանիկ ու Գեյք ֆիդերները և դուրս քաշել բջիջներից, որոնց կադարման մասին ևս զեկուցել է՝ այդ ամենի մասին նշում կադարելով օպերատիվ մատրյանի մեջ: Մոտավորապես 2,5 ժամ անց Գյումրի քարշային ենթակայանի էներգոսնուցումը վերականգնվել է, որի մասին զեկուցել է կարգավարին և ստացել հրահանգ Փանիկի և Գեյքի ֆիդերների յուղային անջարտիչները հրել տեղերը և միացնել, որը կադարել և զեկուցել է: Միաժամանակ նշել է, որ Բայանդուր ֆիդերի վթարային անջարտումից հետո չի հիշում, որ հերթական միացում կադարված լինի, քանի որ եթե նման բան լինելու դեպքում՝ կհիշեր կամ կգրանցեր օպերատիվ մատրյանի մեջ:

<<Հարավկովկասյան երկաթուղի>> ՓԲԸ-ի Գյումրիի հպակային ցանցի պետ Արտակ Զանինյանը ցուցմունք է տվել, որ երբ 11.09.2018 թվականին՝ ժամը 18:00-ի սահմաններում, գտնվել է աշխատասենյակում լսել է ուժեղ ձայն՝ կարծես քամուց ինչ-որ բան պոկվել ու հարվածել է ինչ-որ տեղ: Այդ պահին ուժեղ քամի է եղել, սակայն չի պարզվել, թե ձայնն ինչի հետևանքով է եղել: Քից անց հեռախոսազանգ է ստացել <<ՀԷՑ>> ՓԲԸ-ի <<Ղարս>> մասնաճյուղի կարգավարից, ով հայտնել է, որ <<Գծի հետև>> կոչվող թաղամասում հրդեհ է բռնկվել օգտագործված ավտոպահեստամասերի շինությունում, նշելով, որ երկաթգծի քարշային ենթակայանի բարձր լարման մալուխների հետ է կապված: Խնդրել է գնալ և տեղում պարզել: Հասնելով նշված վայր՝ տեսել է հրդեհը, ապա տեսել է, որ շինության տանիքի մի հատվածը տեղահան է եղած ու ընկած է շենքի հետնամասից անցնող բարձր լարման 3,3 ԿՎ Բայանդուր ֆիդերի մալուխի վրա: Նշված մալուխին զուգահեռ եղել է Արևիկ ֆիդերի 3,3 ԿՎ լարման մալուխը, իսկ դրանց վերևից անցել են 10ԿՎ լարման Գեյք ու Փանիկ ֆիդերները, որոնց հաված չի եղել տանիքը, այն հաված է եղել միայն Բայանդուր ֆիդերին: Ինքը, չգիտենալով, թե վերջինիս մեջ հոսանք եղել է, թե ոչ, զանգել է կարգավարին և ասել, որ Բայանդուր ֆիդերը հոսանքազրկի ու հանկարծ չմիացնի, քանի որ դրա վրա տանիք է նստել ու հրդեհ է բռնկվել: Տեղում բազմաթիվ զանգեր է ստացել, որոնցից մեկով հայտնել են, որ իբր Գյումրի-Բայանդուր հատվածում <<ՀԷՑ>>-ի հաղորդալարը կտրել և ընկել է Բայանդուր ֆիդերի վրա: Դա վտանգավոր է եղել նրանով, որ <<ՀԷՑ>> ենթակայաններն ունեն ավտոմատ միացման համակարգ /АПВ/, որը վթարային անջարտումից հետո, իր իմանալով 1 անգամ ավտոմատ միանում է: Այդ ինֆորմացիայի ճիշտ լինելու դեպքում Բայանդուր ֆիդերը լարում կստանար <<ՀԷՑ>>-ի մալուխներից, որը կանցներ հրդեհի վայրով: Դա կանխելու և ժամանակ չկորցնելու նպատակով՝ իր ատոմեքենայով գնացել է Գյումրի կայարան և անջարտել է մաչտային բաժանիչը, որպեսզի Բայանդուրից Գյումրի լարում չհասնի: Այդ մասին հեռախոսազանգով հայտնել է Երևանի էներգոկարգավարին, ասելով, որ անջարտի նաև Արևիկ, Փանիկ ու Գեյք ֆիդերները: Այնուհետև գնացել է Բայանդուր կայարան և <<ՀԷՑ>>-ի մալուխների ու Բայանդուր ֆիդերի հնարավոր հատման տեղում նայել ու համոզվել է, որ մալուխները նորմալ վիճակում են, այսինքն՝ ստացած տեղեկությունը չի համապատաս-

խանում իրականությանը: Բայանդուրից վերադարձել է Գյումրի՝ դեպքի վայր, և տեսել, որ հրշեջները հանգցնում են հրդեհը: Միաժամանակ նշել է, որ Բայանդուր ֆիդերի վրա եղել է բարձր լարման արագ անջարման անջարիչ, իսկ թե այն հրդեհի ժամանակ աշխատել է արդյոք, չգիտի, սակայն նշել է, որ արագ անջարման անջարիչը ցանկացած անջարումից հետո ավտոմատ չի միանում, այն միացվում է միայն ենթակայանի հերթապահի կողմից՝ էներգոկարգավարի հրահանգով, ուրիշ կերպ բացառվում է:

<<Հարավկովկասյան երկաթուղի>> ՓԲԸ-ի էլեկտրոկարգավար Արման Հարությունյանը ցուցմունք է տվել, որ 11.09.2018 թվականին՝ ժամը 18:10-ի սահմաններում, աշխատանքային հեռախոսահամարին զանգ է ստացել <<ՀԵՑ>> ՓԲԸ-ի <<Ղարս>> մասնաճյուղի կարգավարից և իմացել է, որ <<ՀԵՑ>>-ի էլեկտրական լարն ընկել է երկաթուղու լարի վրա ու պետք է անջարվի Գյումրի ենթակայանի թիվ 1 և թիվ 2 մուտքերի էլեկտրոէներգիան: Ներքին հեռախոսահամարով զանգել է հերթապահին, որ զգուշացնի կատարվելիք անջարման մասին: Քիչ անց նորից զանգ է ստացել <<ՀԵՑ>>-ի կարգավարից, որ անջարել են քարշային ենթակայանի Գյումրիի թիվ 1 և թիվ 2 մուտքերի էլեկտրոէներգիան: Այդ ընթացքում նույնը բանն իրեն հայտնել է Գյումրիի քարշային ենթակայանի հերթապահը: Հետո հեռախոսակապ է ունեցել Արտակ Ջանինյանի հետ, ով ասել է, որ երկաթգծի հարևանությամբ ինչ-որ շինության փանիք ընկել է երկաթգծի բարձր լարման մալուխի վրա, հրդեհ է բռնկվել, հրշեջները կրակը մարում են: Հետո հեռախոսազանգ է ունեցել <<ՀԵՑ>> ՓԲԸ-ի <<Ղարս>> մասնաճյուղի կարգավարի հետ, թե երբ են լարում փալու, որին կոնկրետ պատասխան չի կարողացել տալ, իսկ մոտ 2 ժամ անց նա հայտնել է, որ շուտով լարումը փալու են, որի մասին զգուշացրել է Գյումրիի կարգավարին: Մտփառապես ժամը 22:30-ին, նույն կարգավարն իրեն հայտնել է, որ լարումը տվել են, որի մասին իրեն հայտնել է նաև Գյումրիի կարգավարը, որ ենթակայանի լարումը վերականգնված է: Միևնույն ժամանակ նշել է, որ այդ օրը՝ ժամը 18:00-ի սահմաններում, Գյումրիի հերթապահից զանգ է ստացել, որ կարճ միացումից անջարվել է արագ գործող 3,3 ԿՎ Բայանդուր ֆիդերը, որի մասին սևագրության մեջ նշել է, սակայն օպերատիվ մատչանում թյուրիմացաբար չի գրանցել՝ մոռանալով այդ մասին: Նշել է նաև, որ Բայանդուր ֆիդերի վրա, ինչպես բոլոր 3,3 ԿՎ լարման ենթակայաններում <<ԵԵ>> արագ անջարման անջարիչներ կան, որոնց հզորությունը մինչև 2.800 Ա է: Եթե բեռնվածությունը չի անցնում այդ սահմանը կամ հողանցում չկա, այն չի գործում, իսկ բեռնվածության գերազանցման ու կարճ միացման դեպքում անջարվում է հոսանքը: Ոչ մի ֆիդեր, այդ թվում՝ Բայանդուրիինը, ավտոմատ միացման կամ կրկնակի միացման համակարգ չունի: Կրկնակի միացումը կատարվում է բացառապես էներգոկարգավարի կողմից:

<<Հարավկովկասյան երկաթուղի>> ՓԲԸ-ի օպերատիվ մատչանը գննելու մասին կազմված արձանագրության համաձայն՝ 11.09.2018 թվականին՝ ժամը 17:59-ին, Գյումրիի կարգավար Հարությունյանը հայտնել է Երևանի կարգավար Կարապետյանին, որ նշված ժամին ենթակայանում կարճ միացումից անջարվել է արագ գործող 3,3 ԿՎ Բայանդուր ֆիդեր անջարիչը: Ժամը 18:44-ին Կարապետյանի հրամանով



անջարվել է 3,3 ԿՎ Արևիկ ֆիդերը, որը 1 ընդհանուր անջարվել է: Ժամը 18:45-ին կարգավար Կարապետյանը հերթապահ Հարությունյանին հրահանգել է այդ ժամին անջարել Բայանդուրի ֆիդերի 3,3 ԿՎ գծային բաժանիչը: Ժամը 18:32-ին Հարությունյանը Կարապետյանին հայտնել է, որ ՀԷՑ-ի կողմից այդ ժամին հոսանքազրկվել է Գյումրու քարշային ենթակայանը՝ թիվ 1 և թիվ 2 սնուցող մուտքերից: Ժամը 18:50-ին Կարապետյանը Հարությունյանին հրահանգել է անջարել <<Փանիկի>> և <<Գեդրի>> 10ԿՎ յուղային անջարիչները և դուրս քաշել բջիջները, որի անջարման մասին 2 ընդհանուր անջարվել է:

<<Հարավկովկասյան երկաթուղի>> ՓԲԸ-ից ստացված գրության համաձայն՝ 11.09.2018 թվականի ժամը 17:58-ին նկարվել են Գյումրի քարշային ենթակայանի Բայանդուր ֆիդերի հպակային ցանցի վթարային անջարումներ: Բայանդուր ֆիդերի հերթական միացումները հաջողությամբ են իրականացվել: Ժամը 18:10-ին պաշտպանողական գործողությունների հետևանքով անջարվել է հպակային ցանցի Բայանդուր ֆիդերը: Ստուգում իրականացնելու համար ուղարկվել է Գյումրի կայակային ցանցի պետ Ա.Ջանինյանը: Ժամը 18:28-ին Հայցանցի <<Նարս>> մասնաճյուղի էներգոկարգավարը հայտնել է, որ Բայանդուր կայարանի ուղղությամբ հրդեհ է նկարվել և իրենց բարձր լարման գիծն ընկել է հպակային ցանցի վրա: Նաև ստացվել է տեղեկություն Գյումրի քարշային ենթակայանի անջարման մասին: Ժամը 18:32-ին Գյումրի քարշային ենթակայանը Հայցանցի կողմից հոսանքազրկվել է: Ժամը 18:44-ին Գյումրի և Բայանդուր կայարանների մեխանիկական անջարիչների օպերատիվ փոխանջարումների միջոցով հանվել է Արևիկ ֆիդերի և 10ԿՎ բարձր լարման գծի լարումը: Ժամը 18:10-ից Բայանդուր ֆիդերը, որի վրա ընկած է եղել տանիքը, անջարված է եղել»:

Հ Ե Տ Ա Ջ Ո Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Էլեկտրատեխնիկական մաս

(կատարեց՝ Գ. Հարությունյանը)

Փորձաքննությանը տրամադրված հրդեհի վայր է հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի 40/6 հասցեում գտնվող շինությունը: Այն հետազոտվեց 2019թ. օգոստոսի 23-ին պարզ եղանակին, բնական լուսավորության պայմաններում՝ նախաձեռնողի ներկայությամբ:

Էլեկտրատեխնիկական փորձաքննությունը կատարվեց Գարեգին Ա փողոցի 40/6 հասցեում գտնվող, Էդուարդ Խաչատրյանին պատկանող «Փյունիկ-97» ՍՊԸ-ի շինության, շինության տանիքի, շինությունում գտնվող՝ Վոլոդյա Մելքոնյանի օգտագործված ավտոմեքենաների պահեստի, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Գյումրի քարշային ենթակայանի «Բայանդուր» ֆիդերի և դրանից սնվող Գարեգին Ա փողոցի 40/6 հասցեում գտնվող «Փյունիկ-97» ՍՊԸ-ի շինության մոտով անցնող հաստատուն հոսանքի 3,3ԿՎ լարման մալուխի հատվածների ուսումնասիրությամբ ստացված տվյալների փորձագիտական վերլուծության հիման վրա:

Հետազոտությամբ պարզվեց հետևյալը.

-Գարեգին Ա փողոցի 40/6 հասցեում գտնվող «Փյունիկ-97» ՍՊԸ-ի շինության մոտ անցնում են ՕԳ-ի հենարանների հենամեջում մոնտաժված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հաստատուն հոսանքի 3,3կՎ մալուխներն և բարձր լարման մերկ /այլումինե/ հաղորդալարերը (էլեկտրատեխնիկական մասի լուսանկարչական հավելված, լուսանկարներ թիվ 1-4, 19-22):

-Դեպքի վայրը չի պաղպանվել՝ 2018թ. սեպտեմբերի 11-ին Գյումրու Գարեգին Ա փողոցի 40/6 հասցեում գտնվող շինության վերնակառուց տանիքի մետաղական տանիքապատվածքը, որը ընկած է եղել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Գյումրի քարշային ենթակայանի «Բայանդուր» ֆիդերի մալուխի վրա (քր. գործ. թերթ 11՝ լուսանկարներ թիվ 7 և թիվ 8, թերթ 12՝ լուսանկարներ թիվ 9 և 10) ապամոնտաժված է, ՕԳ-ի հենարանների հենամեջում ֆիդերների մալուխները և հաղորդալարերը գտնվում են լարման տակ (լուսանկարներ թիվ 23-28):

-«Փյունիկ-97» ՍՊԸ-ի շինությունում, որը Վ. Մելքոնյանը օգտագործել է ապամոնտաժված ավտոմեքենաների մասերի պահեստավորման համար, տանիքի երկաթբետոնե հիմնատարրերը, կոնստրուկցիաները և պահեստավորված մասերը ամբողջությամբ վնասվել են տեղի ունեցած հրդեհից (լուսանկարներ թիվ 7-9):

-շինության տանիքից անցկացված, պատին ամրացված պողպատե՝ 52սմ լայնությամբ, հավասարակող 5սմx5սմ չափերի անկյունարդյուններից պատրաստված արտաքին հրդեհային սանդուղքը ենթարկվել է գերտաքացմանը (լուսանկարներ թիվ 10-12): Սանդուղքի հենարանային անկյունարդյունները, որոնք ամրացվել են պատին, այն հատվացնելու, որտեղ շինության պատի մեջ առկա է եղել մետաղական պրմատուրան գերտաքացվել են՝ պատի մեջ անցնող արմատուրայի մոտ առկա են ավազի և ցեմենտի եռակալելի հատվածներ, որոնք նման են հրաբխային ապակուն (լուսանկարներ թիվ 11-17):

-52սմ լայնությամբ, պողպատե, սանդուղքի աջ կողմի հավասարակող 5սմx5սմ չափերի սանդղակալը գերտաքացված և կտրված է դրա միջով կարճ միակցման հոսանքների անցման պատճառով (լուսանկարներ թիվ 11-13, 16-17):


-սանդուղքի երկու պողպատե հենարանային անկյունարդյունների ներքևի /ազատ/ ծայրերի վրա առկա են գերտաքացված հետքեր՝ հալված մետաղի տեսքով (լուսանկարներ թիվ 16-17):

Դեպքի վայրի զննության ժամանակ փորձագետի կողմից՝ տեղագրա-կան վերականգնվեց մինչև 2018թ. սեպտեմբերի 11-ը «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Գյումրի քարշային ենթակայանի «Բայանդուր» ֆիդերի ՕԳ-ի հաղորդալարերի հնարավոր դասավորվածությունն շինության տանիքի նկատմամբ և պարզվեց, որ.

-շինության /որի մեջ պահեստավորված են եղել ապամոնտաժված ավտոմեքենաների մասերը/ տանիքը իսկզբանե եղել է երկաթբետոնե ու այդ պատճառով շինության մոտով հաստատուն հոսանքի 3,3կՎ լարման մալուխի անցկացումը չի հակասել ՏԿ-ի /տեխնիկական կանոնակարգ/ պահանջներին: Երբ շինության տանիքը ենթարկվել է վերակառուցման՝ իրականացվել է երկաթբետոնե տանիքի ձևափոխում՝ վերնակառուց /երկյանջ/ տանիքի մետաղական պատվածքով տեղադրում, տեղի է ունեցել ՏԿ-ի պահանջների խախտում:

Փորձաքննությանը տրամադրված քր. գործի տվյալների ուսումնասիրությամբ պարզվեց, որ.

-2018թ. սեպտեմբերի 11-ին Գյումրու Գարեգին Ա փողոցի 40/6 հասցեում գտնվող շինության վերնակառուց տանիքի մետաղական տանիքա-պատվածքը, որը չի ունեցել ՏԿ-ով պահանջվող հողակցման սարքվածք / բացակայել է հողակցիչի և հողակցման



հողարդիչի համախումբ/, քանու պատճառով, որը, ըստ 17.09.2018թ. թիվ 08-427 գրության կազմել է 25մ/վրկ (քր. գործ թերթ 54) պոկվել և տեղաշարժվել է տեղից՝ ընկել է մոտ 3,25մ հեռավորության վրա շինությունից անցնող «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Գյումրի քարշային ենթակայանի «Բայանդուր» ֆիդերի մալուխի վրա, ինչի պատճառով տեղի է ունեցել միաֆազ հողակցում հողին: Հարկ են համարում նշել, որ մալուխը, որի վրա ընկել է տանիքի մե-տաղական տանիքապատվածքը, չի կտրվել, շինության մետաղական կապ ունեցող կոնստրուկցիաները գտնվել են լարման տակ, ինչի մասին վկայում են արտաքին հրդեհային սանդուղքի ծայրերի և հողի միջև առաջա-ցած էլեկտրաաղեղի հետքերը, սանդուղքի ջերմաստիճանային ձևափոխության դեֆորմացիա և մետաղական կոնստրուկցիայի հատվածներում էլ. բոցերի առկայության հետքեր:

-Ըստ Ա. Վ. Մելքոնյանի՝ վկայի (քր. գործ. թերթ 95) հարցաքննության արձանագրության՝ «...Ժամը 18:00-ի սահմաններում, երբ դեռ գտնվում էինք այդ շինության բակում, ուժեղ քամի սկսվեց, որից հետո պեծկրտոց երևաց, Լևոնը ասաց, որ հլը նայե շինության տանիքը տարավ: Այդ պահին ես նայեցի ու տեսա, որ շինության տանիքը տեղից պոկվեց ու վեր թռավ քանու հաշվին: Այնուհետև շինության ճակատաին մասից բոցեր էին երևում, մի քանի րոպե խառնված այս ու այն կողմ էինք վազում, երբ անցա շինության հետնամաս, տեսա, որ տանիքը ընկել էր շինության հետնա-մասից անցնող բարձր լարման մալուխի վրա ու անընդհատ բոցում էր, «սվառկա» անելու տեսքով, որոնք տարբեր տեղերից էին երևում, այսինքն՝ շենքի տարբեր անկյուններից, դարպասներից ու մետաղական մասերից «դուգա» էր տալիս՝ բոցեկտալու տեսքով...»:

-Ըստ Է. Ն. Սարոյանի՝ վկայի / ՇՄ ՓՎ Գյումրու ՀՓՁ ջրկատի հրամա-նատար/ (քր. գործ. թերթ 102) հարցաքննության արձանագրության՝ «...ես տեսա, որ վերոնշված շինությունը լարման տակ էր, այսինքն՝ շինության տանիքը, որը մետաղյա կոնստրուկցիա էր, քանու հետևանքով տեղահան էր եղել և ընկել էր շինության կողքից անցնող բարձր լարման մալուխների վրա, որի արդյունքում կարճ միացում էր տեղի ունեցել ու դրա հաշվին այրվում էր շինությունում եղած գույքը...: Որոշակի ժամանակ անց, կոնկրետ քանի րոպե չեմ կարող ասել, տեղեկացանք, որ լարում չկա, որից անմիջապես հետո մեր աշխատակիցները սկսեցին իրականացնել հրդեհաշիջ-ման աշխատանքները, որը բավականին ժամանակ անց մեկուսացվեց և մարվեց:...Նշեմ, որ այդ հրդեհի հետևանքով այրվեց շինությունում առկա ավտոմեքենաների օգտագործված պահեստամասերն ամբողջությամբ»:

-Ըստ Հ.Կ. Ավդալյանի՝ վկայի (քր. գործ. թերթ 139) հարցաքննության արձանագրության՝ «...Երբ անցա Գարեգին Ա փողոցը հատող երկաթգիծը, նախ լսեցի ուժեղ գոռոցի ձայն ու մեքենայիս հետին տեսանելիության հայելու միջից տեսա, որ այդ շինության տանիքի մի մասն ամբողջությամբ տեղահան եղավ ու ընկավ այդ բարձր լարման էլեկտրական մալուխի վրա: Նշված երկաթգիծն անցնելուց հետո, այդտեղ գտնվող ավտոլվաժման կետի մոտ կանգնեցրի այն և իջա մեքենայից ու տեսա, շինության տանիքից մխախառն կրակ է դուրս գալիս, հասկացա, որ հրդեհ է բռնկվել...»:

Փորձաքննությանը ներկայացված Գյումրի քարշային ենթակայանի օպերատիվ մատյանի գրառումներից պարզվեց, որ.

-2018թ. սեպտեմբերի 11-ին ժամը 17:59-ին կարճ միակցումից անջատվել է ԵԵ 3,3կՎ ֆիդեր «Բայանդուր» (օպերատիվ մատյան թերթ 37): Հարկ են համարում նշել, որ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի 17. 09.2018թ. Ելք: Յ N°420 գրությունում

(քր. գործ. թերթ 52) նշված է՝ «Բա-յանդուր» ֆիդերի հերթական միացումները հաջողությամբ են իրականացվել, այսինքն քանի որ 3,3կՎ լարման «Բայանդուր» ֆիդերի վրա բացակայում է АПВ /УЧУ/ ավտոմատ կրկնակի միացում ավտոմատիկան /անջատիչը անջատվում է առավելագույն մաքսիմալ էլ. հոսանքային պաշտպանության անպահածամ հատումից, որի նախադրվածքը կազմել է 2800Ա/, «Բայանդուր» ֆիդերի միացում իրականացվել է ենթակայանի հերթապահի կողմից: Այն, որ «Բայանդուր» ֆիդերի անջատիչը միացվել է, վկայում է նույն գրությունում նշվածը՝ «Ժամը 18:10-ին պաշտպանողա-կան գործողությունների հետևանքով անջատվել է հպակային ցանցի «Բա-յանդուր» ֆիդերը: Ժամը 18:10-ից «Բայանդուր» ֆիդերը, որի վրա ընկած էր տանիքը, եղել է անջատված»:

-2018թ. սեպտեմբերի 11-ին ժամը 18:32-ին Գյումրի քարշային ենթակայանի 6,6կՎ թիվ 1 և թիվ 2 մուտքերի էլեկտրամատակարարումը «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղից անջատվել է (քր. գործ. թերթ 142, օպերատիվ մատյան թերթ 37):

Ամփոփելով փորձաքննությանը տրամադրված քր. գործում առկա տվյալները, փորձագետի №18-1865 եզրակացության, դեպքի վայրի զննու-թյան և հարցաքննության արձանագրությունները, տանիքի մետաղական կոնստրուկցիաների, արտաքին հրդեհային սանդուղքի և մալուխի հետա-գոտության արդյունքները, փորձագետն առանձնացնում է էլեկտրատեխ-նիկական մասով հետևյալ ելակետային տվյալները.

ա/ «Բայանդուր» ֆիդերի բարձր լարման արագ անջատման անջա-տիչը ցանկացած անջատումից հետո ավտոմատ չի միանում: «Բայանդուր» ֆիդերի անջատիչը անջատելուց հետո պետք է միացվի ենթակայանի կողմից՝ էներգակարգավարի հրահանգով, հերթապահի կողմից:

բ/ շինության պատի մեջ առկա է ապար՝ հրաբխային ապակու նման ավազի և ցեմենտի եռակայելի հատվածներ, որոնք առաջացել են բարձր լարման տակ գտնվող հաղորդիչ մասի և հողակցված մետաղական կոնս-տրուկցիայի հատվածների միջև առաջացած պարպումներից էլեկտրաաղեղից:

գ/ 2018թ. սեպտեմբերի 11-ին Գյումրու Գարեգին Ա փողոցի 40/6 հասցեում գտնվող շինության վերնակառույց տանիքի մետաղական տանի-քապատվածքը, որը չի ունեցել է մետաղական կապ շինության մետաղական կոնստրուկցիայի հետ, քամու պատճառով պոկվել և ընկել է մոտ 3,25մ հեռավորության վրա շինությունից անցնող բարձր լարման տակ գտնվող «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Գյումրի քարշային ենթա-կայանի «Բայանդուր» ֆիդերի հաղորդալարի վրա: Տեղի ունեցած հողին միաֆազ հողակցումից Գյումրու Գարեգին Ա փողոցի 40/6 հասցեում գտնվող շինության մետաղական կոնստրուկցիան ընկել է ֆազային լարման տակ, և երբ հողակցման հոսանքի մեծությունը հավասարեցվել է «Բայանդուր» ֆիդերի նախադրվածքին՝ 2800Ա-ին, անջատիչը անջատվել է:

Եթե «Բայանդուր» ֆիդերի անջատիչը անջատվել է 2018թ. սեպտեմբերի 11-ին ժամը 17:59-ին, ապա ստացվում է, որ «Բայանդուր» ֆիդերի անջատիչը անջատելուց հետո միացվել է ենթակայանի կողմից, քանի որ 2018թ. սեպտեմբերի ժամը 18:10-ին «Բայանդուր» ֆիդերի հպակային ցանցը անջատվել է կրկնակի:

Եթե «Բայանդուր» ֆիդերի անջատիչը 2018թ. սեպտեմբերի 11-ին ժամը 17:59-ին չի անջատվել, իսկ անջատվել է 2018թ. սեպտեմբերի ժամը 18:10-ին, ապա ստացվում է, որ Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի թիվ 40/6 հասցեում գտնվող «Փլունիկ-97» ՍՊԸ-ին պատկանող շինության մետաղական տանիքը, կոնստրուկցիաները և արտաքին հրդեհային սանդուղքը գտնվել են լարման տակ 10 րոպե:

ը/ Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի թիվ 40/6 հասցեում գտնվող «Փյունիկ-97» ՍՊԸ պատկանող շինության մետաղական տանիքը, կոնստրուկցիաները և արտաքին հրդեհային սանդուղքը գտնվել են լարման տակ, ինչի մասին վկայում են արտաքին հրդեհային սանդուղքի ծայրերի և հողի միջև առաջացած էլեկտրաաղեղի հետքերը, սանդուղքի ջերմաստիճանային ձևափոխության դեֆորմացիա և մետաղական կոնստրուկցիայի հատվածներում էլ. բոցերի առկայության հետքեր:

Փորձագետ՝



Գ. Հարությունյան

Հրդեհատեխնիկական մաս

(կատարեց՝ Մ. Հարությունյանը)

Փորձաքննությանը տրամադրված հրդեհի վայր է հանդիսանում Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի թիվ 40/6 հասցեում գտնվող շինությունը:

Այն հետազոտվեց 2019թ. օգոստոսի 23-ին պարզ արևային եղանակին, բնական լուսավորության պայմաններում, նախաձեռնողի ներկայությամբ:

Հետազոտությամբ պարզվեց, որ այն իրենից ներկայացնում է հատակագծում ուղղանկյունաձև տեսք ունեցող տուֆե քարերից կառուցված շինություն, որի երկարությունը 18,0մ է, լայնությունը 9,0մ: Շինության տանիքը եղել է երկլանջ՝ ծածկված մետաղական թիթեղներով, որը հետազոտման պահին բացակայում էր: Այն բաղկացած է երկու սենյակներից՝ առանձին մուտքերով: Բաց կրակի (բոցի) և բարձր ջերմային ազդեցության հետևանքով շինությունում այրված, ջերմահարված և վնասված դետալների մի մասը գտնվում են շինության դիմաց: Շինության ներսի հետազոտությամբ պարզվեց, որ հրդեհի հետևանքով գրեթե ամբողջությամբ այրվել են այրունակ նյութերը՝ մեքենաների դետալները, փայտյա դարակաշարերը և այլն: Հրդեհի հետևանքով առաջացած հետքերը և վնասվածքները բաշխված են գրեթե հավասարաչափ երկու սենյակներում: Ձախակողմյան սենյակի տանիքը հեռավոր ձախ անկյունում փլուզված է:

Ելնելով կատարված հետազոտության արդյունքներից՝ դեպքի վայրի հետազոտուման պահին առկա հետքերից և դրանց բաշխվածությունից, հաշվի առնելով նաև էլեկտրատեխնիկական հետազոտության արդյունքները և քրեական գործի նյութերում առկա տեղեկությունները փորձագետը նշում է, Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի թիվ 40/6 հասցեում գտնվող շինությունում տեղի ունեցած հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել շենքի մետաղական տանիքի պոկվել և ընկնելը «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Գյումրի քարշային ենթակայանի «Բայանդուր» ֆիդերի հաղորդալարի վրա, որի հետևանքով շինության մետաղական կոնստրուկցիաների տարրերի միջև առաջացած պարպումներից անջատվել են կայծեր: Կայծերի արդյունքում առաջացած շիկացած մասնիկները ընկնելով տարածքում առկա այրունակ նյութերի վրա առաջացրել են հրդեհ (ավելի մանրամասն տես էլեկտրատեխնիկական մաս բաժնում):

Փորձագետ՝




Մ. Հարությունյան

Ամփոփելով կատարված հետազոտության արդյունքում ստացված տվյալները փորձագետները հանգում են հետևյալին.


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Փ Ո Ր Չ Ա Ք Ի Տ Ա Կ Ա Ն Կ Ե Ն Տ Ր Ո Ն
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2020թ. հուլիսի 21-ի հմ' 23421904 ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ


Լուսանկարչական հավելված
ԸՆԴԱՍԵՆԸ 28 ԼՈՒՄԱՆԿԱՐՈՎ




Լուսանկար № 1




Լուսանկար № 2




Լուսանկար №3




Լուսանկար № 4



Լուսանկար № 5



Լուսանկար № 6




Լուսանկար № 7




Լուսանկար № 8




Լուսանկար № 9




Լուսանկար № 10




Լուսանկար № 11




Լուսանկար № 12




Լուսանկար № 13



Լուսանկար № 14




Լուսանկար №15




Լուսանկար №16




Լուսանկար №17




Լուսանկար №18




Լուսանկար №19



Լուսանկար №20




Լուսանկար №21




Լուսանկար №22







Լուսանկար №23




Լուսանկար №24




Լուսանկար №25



Լուսանկար №26




Լուսանկար №27



Լուսանկար №28

Փորձագետ՝



Գ. Հարությունյան